Արձանագրություն N 3

«ԵՔ- ԷԱՃԱՊՁԲ-19/72» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան **12.02.2019թ.**
Ժամը՝ 11:00

Մասնակցում էին
Հանձնաժողովի նախագահ՝ Խ. Հակոբյան
Հանձնաժողովի անդամներ՝ Ս. Մաքսապետյան, Հ. Հարությունյան,
Հանձնաժողովի քարտուղար՝ Լ. Ղավալյան

1. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ներկայացված տեղեկատվության մասին

(Խ. Հակոբյան)

1. Ընդունել ի գիտություն որ.

1.1 «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի /այսուհետ՝ Կարգ/ 43-րդ կետի 3-րդ ենթակետի՝ հարցում էր ներկայացվել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ:

1.2 ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել է տեղեկատվություն, համաձայն որի մասնակցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ չունի ժամկետանց հարկային պարտավորություններ:

2. Որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերի վերաբերյալ ներկայացված տեղեկատվության մասին

(Խ. Հակոբյան)

2.1 Առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային աճուրդի համակարգի միջոցով ներկայացրել է առաջարկված ապրանքների տեխնիկական բնութագրերը, սակայն որտեղ արձանագրվել է հետևյալ անհամապատասխանությունը՝ պետք է ներկայացվեր ապրանքների ամբողջական նկարագրերը հրավերի հավելված 3 ձևաչափով և էլեկտրոնային ստորագրությամբ:

2.2 Հիմք ընդունելով <<Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 47-րդ կետը՝ գնահատող հանձնաժողովը որոշեց ծանուցել «Հրաշք այգի» ՍՊԸ -ին մեկ աշխատանքնային օրվա ընթացքում շտկելու նշված անհամապատասխանությունը: Նշված ժամկետում մասնակցի կողմից անհամապատասխանությունը չշտկելու դեպքում հայտը կմերժվի:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3 դեմ - 0:

5. Ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

(Խ. Հակոբյան)

Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել 13.02.2019թ. ժամը 14:30-ին, Երևանի քաղաքապետարան, Արգիշտիի 1, 3-րդ հարկ հասցեում:

Հանձնաժողովի նախագահ՝		Խ. Հակոբյան
Անդամներ՝		Ս. Մաքսապետյան
		Հ. Հարությունյան
Համակարգող՝		Լ. Ղավալյան